Ամփոփ նյութ

ԱՁ «ՎԱԼԵՐԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ» (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 313) ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ ԱՁ «ՎԱԼԵՐԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ» (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 313) փոխանակման կետի նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ արժութային գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար:

Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱԽԱԳԱՀ
ՈՐՈՇՈՒՄ
05/04/2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1/114 Ա
ԱՁ «ՎԱԼԵՐԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ» (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 313)
ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սույն որոշման նկարագրական մասի 1-ին և 2-րդ կետերում նկարագրված խախտումները թույլ տալու համար «ՎԱԼԵՐԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ» (լիցենզիա թիվ 313) փոխանակման կետի նկատմամբ նշանակել տուգանք 4.000.000 (չորս միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով:
2. Սույն որոշման նկարագրական մասի 3-րդ,4-րդ և 5-րդ կետերում նկարագրված խախտումները թույլ տալու համար «ՎԱԼԵՐԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ» (լիցենզիա թիվ 313) փոխանակման կետի նկատմամբ նշանակել տուգանք 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փոխանակման կետ մուտքագրվելու կամ Փոխանակման կետի՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ